ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՄՍԻԱՑ ՔՐՈՆԻԿ

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ՌՈՃԻԿՆԵՐ

«Մուրճ»-ի անցեալ № 6-ում տպւեց Վ. Եհափառ կաթողիկոսի կոնդակը վերաբերեալ հայոց եկեղ.-ծխական ուսումնարաններին, որի գլխաւոր նիւթն է այդ ուսումնարանների ուսուցիչների և ուսուցչուհիների ռոճիկների սահմանումը։ Այդ նոր հրահանգի բնաւորութիւնը և հաւանական հետևանքները իմանալու համար հարկաւոր է մի հայեացք դցել անցեալի և ներկայի վերայ և որոշել իւրաքանչիւր շրջանի բնաւորութիւնը առհասարակ։ Հայոց եկեկ.-ծխական ուսումնարանները մինչ այժմ երեք շրջան են անցել, մեզանում՝ Անդրկովկասում, ներկայ դարուս մէջ. առաջին շրջանը՝ տեւում է մինչ 60-ական թւականների սկիզբը. այդ շրջանում ուսումնարաններ շատ քիչ էին տարածւած, եղածների մեծագոյն մասը՝ հին խալիֆայական ուսումնարաններ էին։ 60-ական թւականների սկզբից՝ Մատթէոսի կաթողիկոսութեան օրերով սկսւում է մեզանում ժողովրդական դպրոցների բացումը. ժողովուրդ և եկեղեցի ձեռք ձեռքի տւած՝ ընդհանուր եկամուտներով և տուրքերով հիմնում են մեր այժմեայ եկեղ.-ծխական երկոտա դպրոցները. հաստատւում է ժողովրդական հողաբարձութիւնը։ Այդ շարժումը աւելի ևս մեծ ոյժով շարունակւում է Գէորգ IV կաթողիկոսի ժամանակ։ Այդ շրջանը, որ տևեց քսան տարի՝ մեր Եկեղ.-ծխական երկսեռ ուսումնարանների թէ զաղափարի պրոպագանդայի և թէ նոցա հաստատութեան շրջանն է։ Այս շրջանումն է, որ թէ հոգևոր իշխանութիւնը և թէ ժողովուրդը ընտելացան ուսումնարանական գործի մանաւանդ վարչական տնտեսական մանրամասնութիւնների հետ. և այդ շրջանումն է, որ մեզանում կազմւեց ուսուցչական դասակարգ, բաղկացած շատ տարբեր ցեղի տէր մարդկանցից՝ թէ արականներից, թէ իգականներից։ Այդ շրջանը՝ մեր եկեղ. ծխական ուսումնարանների ծննդեան պրոցեսի շրջանն էր։

1886-ից սկսած, Մակար կաթողիկոսի օրերով, սկսում է մի երրորդ շրջան, որի մէջ ես որոշում եմ երկու գծեր։ Դոցանից մէկն է ուսումնարանական կարգաւորութիւնը։ Եւ ահա թէ ինչ եմ ուզում դորանով ասել. մեր ծխակ.-եկեղեց. ուսումնարանները տարբեր ծրագիրներով հաստատած ուսումնարաններ էին. նոյնանուն ուսումնարանների հաւասար դասատներում նոյն ծրագիրը չէին անցնում. ուսումնարանի առաջին դասատնից աւարտածը չէր կարող առանց ալ և այլութեան քննութիւն տալ կամ անցնել ուրիշ եկեղ.-ծխակ. ուսումնարանի երկրորդ դասատունը, կամ մտնել թեմական դպրոցի համապատասխան դասատունը։ Ամեն մի ուսումնարան մի մի աւտոնոմ հաստատութիւն էր առանց կապի ընդհանրութեան հետ։

Այդ փոխուեց. բոլոր ուսումնարանները, որ կրում են եկեղեցական-ծխական ուսումնարանի անունը, այժմ ունին բոլորովին հաւասար ծրագիր։ Միակերպ սիստեմի վերածել մեր տարրական ուսումնարանների ծրագիրները—ահա նպատակը։ Ալ խնդիր է, թէ ինչ փոփոխութիւնների ենթարկուեց ինքը ծրագիրը։

Ուսուցիչները ծառայում էին ուսումնարաններում՝ հոգաբարձութեան հետ կապած պայմանների համաձայն. չը կար ոչ մի կանոն ծառայութեան տեւողութեան համար։ Մի տարի ժամանակով ծառայելը կանոն էր. աւելի երկարը՝ բացառութիւն։ Դորանից ամեն տարի ուսուցչական փոփոխութիւններ։ Ուսուցչի վիճակը ոչնչով չէր ապահովուած։

Այդ փոխուեց։ Ուսուցիչը այժմ կապւում է երեք տարով։ Թափառելը այժմ անհրաժեշտութիւն չէ։

Ուսումնարանների ուսումնական թէ տնտեսական մասերը միանգամայն հոգաբարձութիւնների հսկողութեան ներքոյ էին։ Ուսուցիչները ժողովրդական հոգաբարձուներից էին կախուած բոլորովին։

Այժմ գործը մի փոքր ուրիշ տեսակ է. ուսուցիչները աւելի կապուած են աւագ ուսուցչի հետ, որը այժմ աւելի մեծ մասնակցութիւն ունի խումբ կազմելում, քան հոգաբարձութիւնը։ Իսկ աւագ-ուսուցիչը աւելի է հասկանում ուսումնական գործը, քան հոգաբարձութիւնները։

Ուսուցիչ առաջ լինում էր ով միայն ցանկանում էր և ում մի որ և իցէ հոգաբարձութիւն հրաւիրում էր։

Այժմ ուսուցիչ լինելու համար պահանջւում է հաստատութիւն կաթողիկոսից, որը և հրատարակում է ուսուցիչների և ուսուչուհիների ցուցակը։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ ներկայ կաթողիկոսութեան գլխաւոր ուշքը, եկեղ.-ծխական ուսումնարանների նկատմամբ, ըստ արտաքինին, դարձած է նոցա կազմակերպելու, սիստեմի վերածելու, նոցա համար որ և իցէ հաստատ և միակերպ կանոններ ստեղծելու վերայ։

Ես այս բոպէին չեմ մտնում խնդրի մանրամասնութիւնների մէջ.

ապ միայն աշխատում եմ ճանաչել այժմեայ հայոց ուսումնարանական իշխանութեան գործունէութեան գերիշխող ձգտումը. և գտնում եմ, որ՝ միակերպութեան վերածելը, կանոնաւորելը—այդ գործունէութեան գլխաւոր գծերից մէկն է։

Սա մի հայեացք է, որը բղխում է համեմատութիւնից։

Բայց ես գտնում եմ և մի ուրիշ գիծ, որը նմանապէս բնորոշ է. այդ այն համեմատապէս գերիշխող դերն է, որ յատկացնում է հոգևորականին մեր ուսումնարանական գործերում։ Հոգաբարձութեան երեք անդամներից մէկը անպատառ ծխական քահանան է. երկրորդը՝ երեսփոխն է, ուրեմն նմանապէս եկեղեցու և բարձր հոգևոր իշխանութեան հետ կապուած ոմն։ Եւ հոգաբարձութեան նախագահը նոյն քահանան է։ Այսպէս է բանը անցեալ տարի հրատարակուած «կանոնների» համաձայն։ Արդ, «Մուրճ»-ը այդ մասին արդէն առիթ ունեցաւ նկատելու հետևեալը՝... «մենք գտնում ենք, որ այդ նոր կանոնադրութիւնով ծխական քահանաների համար ստեղծւում է մի նոր պաշտօն, որը յաջողութեամբ վարելու համար նոքա, այդ ծխական քահանաները, պէտք է ունենան աւելի բարձր կրթական ցենզ, քան այժմ նոքա ունին»։

Այդ ասաց «Մուրճ»-ը, երբ խօսքը միայն քահանայի մասին էր, իբր հոգաբարձութեան անդամի և նախագահի։

Այժմ ես գտնում եմ, որ այդ ձգտումը՝ ուսումնարանը կապել քահանաների հետ, մի նոր գործադրութիւն է գտնում նոր հրահանգի մէջ։ Եւ ահա թէ ինչպէս։ Նոր կարգադրութեամբ հրամայւում է որ՝

«Եւ եթէ հնար իցէ, ընտրեսցիք յաւագ ուսուցչութիւն զարժանաւորագոյնն ի քահանայից՝ մտելոց ընդհանուր ցուցակ, յատկացուցանելով նոցա զդասս և եթ կրօնի»։

Արդ, անցեալ տարւանից հոգաբարձութեան մէջ իշխողը ծխական քահանան է, կրօնուսոյց-քահանան ուսուցիչների մէջ իւր տեղն ունէր։ իսկ նոր հրահանգի զօրութեամբ, քահանան-կրօնուսոյցը պէտք է նաև աւագ-ուսուցչի պաշտօնի համար գերադասութիւն ունենայ։

Եւ ըստ իս, նոր հրահանգի ամենակարևոր կէտը հենց այդ է, որի վերայ և դարձնում եմ ընթերցողներիս ուշադրութիւնը։

Մնացեալում, ուսուցիչների ուռճիկների կանոնաւորելու ջանքը ես համարում եմ իբր շարունակութիւն իմ վերը գծագրած համակերպութեան և կարգաւորութեան գործի, որ ես նմանապէս բնորոշ ընդունեցի ներկայ հայ եկեղ.-ծխական վարչութեան համար։ Այժմ ուռճիկներն են կանոնների տակ դնւում, որպէս զի դէմն առնւի աւելորդ սակարգութիւնների, որ տեղի են ունենում ուսուցիչների և հոգաբարձութիւնների մէջ։

Բայց մի բան, որ աչքի է ընկնում առաջի անգամից, այդ այն է, որ դասաւանդական առարկաների մէջ մեծ խտրութիւններ են դնւում.

կրօն, հայոց լեզու, ռուսաց լեզու, ռոճիկների նկատմամբ, համարում են առաջնակարգ, մնացեալները՝ երկրորդակարգ—առաջինների համար դասին վճարում են ամենաշատը՝ 20 ռուբլի, երկրորդների համար ամենաշատը՝ 15 ռ.։ Այդ խտրութիւնը անկասկած վատ կերպով է ազդելու ուսուցիչների և ուսուցչական խմբերի կազմի վերայ։ Երկրորդ, նոր կանոններով արտակարգ դրութեան մէջ են դրուած այն երկդասեան ուսումնարանները, որոնց արդիւնքը անցնում է 2.640 ռուբլին տղայոց և 2.910 ռուբլին՝ օրիորդաց ուսումնարանների համար և այն միադասեան ուսումնարանները, որոնց արդիւնքը անցնում է 1450 ռ. տղայոց և 1565 ռ. օրիորդաց համար։ Այն ուսումնարանները, որոնք այդքանից աւելի ունին, ուրեմն և կարող են աւելի վճարել պէտք է առանձին կազմեն իրանց եռամեայ նախահաշիւը և չկանէ չանանէ ներկայացնեն բարձր հոգևոր իշխանութեանը այն ուսուցիչների և ուսուցչուհիների անունները, որոնց ուղում են սահմանից դուրս ռոճիկներ տալ։ Մինչդեռ մենք ունինք այսօր դոնէ մի քանի երկդասեան և միդասեան եկեղ.-ծխակ. ուսումնարաններ, որոնց տարեկան արդիւնքը նոր կանոններում նշանակուածից գերազանց է։ Ես ուղղակի վերցնում եմ «Վիճակագրական տեղեկութիւնք եկեղեցական-ծխական ուսումնարանաց համար ընթացս 1887/88 ուսումնական ամի» պաշտօնական գիրքը, կազմում եմ ցուցակ մեր բոլոր եկ. ծխ. ուսումնարանների և տեսնում, որ շատ ուսումնարաններ ունինք, որոնց տարեկան արդիւնքը նշանակուածից գերազանց է։

Այսպէս օրինակ, երկդասարանեան ուսումնարաններից վերցնենք Թիֆլիսի թեմի համար՝ Թիֆլիսի Գայեանեան ուսումնարանը (8.479 ռ.), Մարիամեան-Ցոլնանեան ուսումն. (7.455 ռ.), Թիֆլիսի Տաքի-Թաղի ս. Գէորգի ուսումնարանը (3.568 ռ.), Ախալցխայի Եղիսաբէթեան և Կարապետեան ուսումնարանները իրանց 11.100 ռ. եկամուտով. Երևանի Ս. Գայեանեան ուսումնարանը (4.244 ռ.), Ալեքսանդրոպոլի Արղութեան օրիորդաց ուսումնարանը, (3.017 ռ.), նոյն տեղում Ս. Փրկիչ տղայոց ուսումնարանը (5.917 ռ.), Շամախու օրիորդաց և տղայոց ուսումնարանը (7.365 ռ.), Բաքուայ օրիորդաց և տղայոց ուսումնարանը (10.870 ռ.), Ղզլարի օրիորդաց և տղայոց ուսումնարանը (6.121 ռ.)։

Բայց ես յորդորում եմ մեր դպրոցների հոգաբարձութիւններին՝ քաջալերէն օգտուել իրանց տուած իրաւունքից և ապացոյց տալ, որ լաւ ուսուցչին և լաւ ուսուցչուհուն նաև լաւ վարձատրելու կամքն ունին։

Թերևս ինձ նկատեն, որ Կոնդակի վերջում վկայուում է, թէ «եկեղեցական աղբիւրները մատակարարում են մեր եկեղ.-ծխական ուսումնարաններին աւելի մեծ գումարներ, քան նշանակուած են միջատակուած կոպարներում» և որ կից դորա հետ յորդոր է կարդացուում առաջնորդներին, որ նոքա աշխատեն ամեն եկեղեցու կից բանալ գէթ մի-մի միդասեան

ուսումնարան, իսկ միդասեանները աշխատեն գարձնել երկդասեան ուսումնարաններ։ Լուրեմն պէտք է մտածել որ ռոճիկները կրճատուում են յօգուտ նոր բացուելիք ուսումնարանների!

Բայց միւս կողմից, մենք բազմաթիւ ուսումնարաններ ունենք, ուր ուսուցիչների ռոճիկները չեն էլ հասնում այն համեստ մեծութեանը, որ նշանակուած է այժմ նոր կանոններով։ Այդ պարզ կարելի է տեսնել այն ցուցակից, որ, օգտուելով պաշտօնական տեղեկութիւններից, ես ստորև դնում եմ «Մուրճ»-ի ընթերցողների առջև։ Ահա այդ տեսակ ուսումնարանների վերայ եթէ նոր կարգագրութիւնը կարողանայ ունենալ որ և է բարոյական ներգործութիւն,—այդ կը լինէր մի վաստակ։ Առաջուց զուշակել այդ սակայն անհնարին է։

ԼՈՒՍԻՆԻ

Հայոց եկեղեցական-ծխական ուսումնարանների տարեկան եկամուտները 1887/88 թուականին, պաշտօնական տեղեկութիւնների համաձայն։

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ

Ընդ. թիւ	Ազգանուն	Տարեկան եկամուտ	Գիտնականների թիւ
	Ք. Խաչիկ գիւղ։		
1	Ս. Դալեանեան. ...	4.244	2
2	Ս. Շողակաթեան . և	1.206	1
3	Տղայոց.		
	Քանաքեռ։		
4	Տղայոց.....	691	1
	Ջիգրամլու։		
5	Տղայոց.....	450	1
	Ղամարլու։		
6	Տղայոց.....	620	1
	Խանլար։		
7	Օրիորդաց ..... և	400	1
8	Տղայոց.....		
	Ռ-լու-Նորլիք։		
9	Տղայոց.....	250	1
	Խաչիկ գիւղ։		
10	Տղայոց.....	250	1
	Գոնչիկ։		
11	Տղայոց.....	225	1
	Նախիջևան գաւառ։		
12	Օրիորդաց ..... և	1.346	1
13	Տղայոց.		
	Զնաբերդ։		
14	Տղայոց.	43	1
	Վերին-Ափուլլու։		
15	Օրիորդաց..... և	4.300	2
16	Տղայոց		
	Ներքին-Ափուլլու։		
17	Օրիորդաց ..... և	997	1
18	Տղայոց.....		
	Աղթամար գիւղ։		
19	Տղայոց	413	1

	Տարեկան գումարը	Գրագիրներ
Զահուկ։		
20 Տղայոց	445	1
Շիմահմոտ։		
21 Տղայոց.....	161	1
Ցնոռ։		
22 Տղայոց.....	770	1
Զոռղ։		
23 Տղայոց.....	250	1
Տոնկիրբ։		
24 Տղայոց	168	1
Վաղարշապատ գիւղ.		
25 Օրիորդաց ..... և 26 Տղայոց	2.120	2
Աշտարակ։		
27 Տղայոց.	653	1
Իգդիր։		
28 Ս. Շուշանեան.... և 29 Տղայոց.	2.150	2
Գէնդլու։		
30 Տղայոց	620	1
Կողզ։		
31 Երղնկեանց տղայոց.	570	2
Ալէքսանդրապոլ։		
32 Արղութ. օրիորդաց.	3.077	2
33 Ս. Փրկիչ տղայոց..	5.017	2
34 Սահակեան օրիորդ.	2.562	1
35 Ս. Նշան, աղայոց .	800	1
36 Ս. Աստ. աղայոց .	3.912	1
Մեծ-Ղարաքիլիսա։		
37 Օրիորդաց ..... և 38 Տղայոց.	10.542	1
Համամլի։		
39 Տղայոց	570	1
Աղթիլա։		
40 Տղայոց.....	250	1
Զոլա։		
41 Տղայոց	200	1
Խլի-Ղարաքիլիսա։		
42 Տղայոց.....	250	1
Հոռոմ։		
43 Տղայոց	602	1
Դահրլի։		
44 Տղայոց.....	178	1
Հոռիզ։		
45 Տղայոց.....	2.157	2
Նոր-Բայազետ։		
46 Ս. Հռիփսիմ. օր. և 47 Ս. Մեսրոպ. աղ..	3.463	2
Տոռնա գիւղ։		
48 Տղայոց.....	756	1
Բանակոռ։		
49 Տղայոց	360	1
Մեղրի։		
50 Տղայոց.....	977	2
Կոր։		
51 Օրիորդաց ..... և 52 Տղայոց.	4.131	2
Բիւրեղ։		
53 Տղայոց.....	400	1
Բաշ-Նորաշեն։		
54 Տղայոց.....	200	1
Փիրսալի։		
55 Տղայոց	393	1
Բերնա գիւղ։		
56 Տղայոց.....	400	1
Աբրահան։		
57 Տղայոց.....	369	1
Կողզան։		
58 Օրիորդաց ..... և 59 Տղայոց.....	1.460	1
Սարիղամիշ։		
60 Տղայոց	352	1

ԹԻՖԼԻՍԻ ԹԵՄ

Թէփլիս։	Տար. ծախք	Վարժ. թիւ
1 Գալստանեան	8.479	2
2 Մար.-Յովհաննեան	7.455	2
3 Թանդոյեան	2.503	2
4 Ս. Մարիամեան	1.800	1
5 Աւետեաց եկեղեցի	1.200	1
6 Հայուհ. բար. ընկ.	2.000	1
7 Էջմիածնեցոց եկեղ.	1.625	1
8 Կուկիոյ ս. Աստուած.	1.460	1
9 Կաթող. ս. Գէորգ.	1.262	1
10 Ջրկենանց ս. Կար.	420	1
11 Տափի թ. ս. Գէորգ.	3.568	2
12 Ս. Կարապետ. Հաւաբարի	548	1
Ախալցխա։		
13 Նշխարէթեան		
և	11.100	2
14 Կարապետեան		
Ախալքալաք։		
15 Սանդխտեան		
և	3.243	2
16 Ս. Մեսրովպեան		
Գօրի։		
17 Օրիորդաց		
և	2.367	1
18 Տղայոց		
Ախալքալաք գիւղ։		
19 Տղայոց	500	1
Ցխինվալ։		
20 Օրիորդաց	500	1
Սուրամ։		
21 Օրիորդաց		
և	949	1
22 Տղայոց		
Դուշէթ։		
23 Տղայոց	949	1
Շուլավեր։		
24 Տղայոց	3.331	1
Դսեղ գիւղ Լօռիում։		
25 Տղայոց	330	1
Ջալալ-Օղլի։		
26 Տղայոց	742	1
Թելաւ։		
27 Օրիորդաց		
և	2.473	2
28 Տղայոց		
Սղնախ։		
29 Օրիորդաց		
և	3.223	1
30 Տղայոց		
Զաքաթալա։		
31 Տղայոց	1.200	1
Քութայիս։		
32 Օրիորդաց		
և	3.398	2
33 Տղայոց		
Բաթում։		
34 Տղայոց	1.500	1
Միխէլով։		
35 Տղայոց	458	1
Գոնջոկ քաղաք։		
36 Օրիորդաց		
և	2.670	2
37 Տղայոց		
Զուրտախլու գիւղ։		
38 Տղայոց	360	1
Բանանց գիւղ։		
39 Տղայոց	400	1
Փոթի։		
40 Օրիորդաց	310	1
Դիլիժան գիւղ։		
41 Տղայոց	500	1
Քարաւանսարայ։		
42 Տղայոց	350	1

ԱՐՑԱԽԻ ԹԵՄ

Շ ա ր ք ։	Տարեկան Ընդհանուր գումարը	Դասակարգը
1 Օրիորդաց		2
Վաղարշաբոյն։		
2 Տղայոց.....	350	1
Թաղեաց։		
3 Տղայոց.....	315	1
Հաղբատ։		
4 Ս. Թարգմանչաց...	305	1
Դանավաղ։		
5 Ս. Գրիգորեան աղ.	350	1
Խանչանդ։		
6 Ս. Գէորգեան տղ..	300	1
Կիւնէյ ճաղաք։		
7 Ս. Գրիգորեան տղ.	200	1
Ներքին-Թաղեաց։		
8 Ս. Մեսրոպ. տղ...	250	1
Սարուշէն։		
9 Ս. Գրիգորեան տղ..	250	1
Նուրի գաղթ։		
10 Ս. Մարիամեան... և	5.912	1
11 Տղայոց.....		
Վարդաշէն։		
12 Ս. Սահակեան տղ..	694	1
Նիժ։		
13 Ս. Մեսրոպեան...	365	1
Սուլթ. Նուրի։		
14 Տղայոց.....	371	1
Ամբուան։		
15 Ս. Գէորգեան	380	1

ՇԱՄԱԽՈՒ ԹԵՄ

Շամախի գաղթ.		
1 Օրիորդաց ..... և	7.365	2
2 Տղայոց.....		
Բաքու։		
3 Օրիորդաց ..... և	10.870	2
4 Տղայոց		
5 Բաղուաքենակ շամախեցւոց օրիորդաց. և		1
6 Տղայոց.		
Դարբանդ։		
7 Օրիորդաց..... և	3.709	1
8 Տղայոց.		
Ղուբա։		
9 Տղայոց	8.947	1
Մարգաստ։		
10 Տղայոց.....	848	1
Գիրգ։		
11 Տղայոց.....	500	1

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄ

	[illegible]	[illegible]
Աստրախան։		
1 Օրիորդաց .... և 2 Տղայոց	5.872	2
Ղզլար։		
3 Օրիորդաց .... և 4 Տղայոց	6.121	2
Մոզդոկ։		
5 Օրիորդաց .... և 6 Տղայոց	2.719	1
Արմաւիր։		
7 Օրիորդաց .... և 8 Տղայոց	3.088	1
Վլադիկավկազ		
9 Օրիորդաց........ և 10 Տղայոց.	1.920	1
Ստաւրոպօլ։		
11 Օրիորդաց .... և 12 Տղայոց	1,237	1
Սուրբ Խաչ գիւղը։		
13 Օրիորդաց........ և 14 Տղայոց	—	1
Եկատերինօդար։		
15 Օրիորդաց.դ...... և 16 Տղայոց	2.020	1
Նփեսա։		
17 Տղայոց...........	650	1
Թեմիր-Խան-Շուրա։		
18 Տղայոց...........	425	1